ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

# ՀՐԱՄԱՆ №26

«21» 04 2022 թ. ք. Երևան

## ՀԱՆՁՆՈՒՄ-ԸՆԴՈՒՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազ Դավիթ Միքայելի Վեքիլյանին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության ավագ դատախազի պաշտոնում նշանակելու և Ռաֆայել Բագրատի Երիցյանին նույն վարչական շրջանի դատախազի պաշտոնում նշանակելու մասին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի համապատասխանաբար՝ 15.04.2022թ. N 22 և 18.04.2022թ. N 101-Ա հրամանները և այն, որ անհրաժեշտ է նրանց միջև կատարել վարույթների, փաստաթղթերի, գույքի, կնիքների ու դրոշմակնիքների հանձնում-ընդունում, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

**Հ ր ա մ ա յ ու մ  ե մ՝**

1. Կատարել Դ.Վեքիլյանի կողմից՝ Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազության վարույթների, փաստաթղթերի, գույքի, կնիքների ու դրոշմակնիքների հանձնում, իսկ Ռ.Երիցյանի կողմից՝ ընդունում, որի համար ստեղծել հանձնախումբ՝ հետևյալ կազմով.

***Հանձնախմբի ղեկավար՝***

| | |
|---|---|
| Ասլանյան Հայկ - | Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ |

***Հանձնախմբի անդամներ՝***

| | |
|---|---|
| Կոստանդյան Արսեն - | Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազի տեղակալ |
| Մարտիրոսյան Հայկ - | Հայաստանի Հանրապետության դատախազության ֆինանսատնտեսական վարչության պետ |

| | |
|---|---|
| Նազարեթյան Արմինե - | Հայաստանի Հանրապետության դատախազության արխիվի բաժնի պետ |
| Քոչարյան Նարինե - | Հայաստանի Հանրապետության դատախազության ընդհանուր բաժնի պետ |
| Բաղդասարյան Լևոն - | Հայաստանի Հանրապետության դատախազության առաջին բաժնի պետ |
| Դադոյան Սեդա - | Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազության տարածքային բաժնի պետ: |

2. Հանձնախմբի ղեկավարին՝ հանձնման-ընդունման ակտի մեկ օրինակը Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն ներկայացնել մինչև 2022 թվականի մայիսի 5-ը:

**Ա.ԴԱՎԹՅԱՆ**